ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ներքին աուդիտի ծառայության մատուցման ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի հունիսի 23-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/3 գնման պայմանագրում 2023 թվականի հունիսի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	Ծառայության մատուցման ժամկետի երկարաձգման մասին Կատարողի կողմից ներկայացված գրություն
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրով սահմանված ծառայության մատուցման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն, Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

23.06.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/3 գնման պայմանագրի

ք. Երևան 23. 06. 2023թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման համար Կողմերի միջև 23.06.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-22/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրով սահմանված ծառայության մատուցման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ մինչև 23.07.2023թ. ներառյալ:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը բաղկացած է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, "Դոմ Մոսկվի" բիզնես կենտրոն,
կառավարական տուն 3	Արգիշտի փող., 7, 1-ին հարկ
ՀՀ ֆինանսների նախարարության	<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 2052022188681001
Հ/Հ 900011011724	ՀՎՀՀ 02618043
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____Ա. Մկրտչյան	_____Ա.Ասատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.